Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԵՆՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՄԷՆԵԱՆ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր ու նուիրեալ զաւակիդ, ում կեանքն ու գործը հատկանշուում է գիտամանկավարժական ու հասարակական բեղուն գործունէութեամբ:

Յարգարժան պրն Արմէնեան,

Տասնամեակներ շարունակ Դուք անխոնջ նուիրումով ծառայել էք առողջապահութեան բնագաւառում՝ բազում պատասխանատու պաշտօններ յանձն առնելով Լիբանանի, Հայաստանի, Օմանի, Գերմանիայի, Իրաքի եւ այլ երկրների բժշկական հաստատութիւններում ու կրթօջախներում: Ձեր հեղինակած բազմաթիւ գիտական աշխատութիւններ՝ նուիրուած առողջապահական հրատապ խնդիրների ուսումնասիրութեանը, մեծ ընդունելութեան ու գնահատանքի են արժանացել մասնագէտների կողմից եւ հրատարակուել տարբեր երկրներում: Ձեր բարձր հեղինակութեան վկայութիւններն են Ձեր մասնակցութիւնը բազմաթիւ գիտաժողովներին, անդամակցութիւնը բժշկական ասպարէզի միջազգային հեղինակաւոր կազմակերպութիւններին, հայրենական եւ միջազգային բարձր պարգեւները, կոչումներն ու ակադեմիական մրցանակները, որոնք արժանիի մատուցումն են Ձեր գիտական արդիւնաշատ գործունէութեանը: Անյոգնաբեկ ու նուիրեալ աշխատանքով արձանագրուած Ձեր յաջողութիւնները ճանաչում են բերում նաեւ Հայրենի մեր երկրին ու բարեպաշտ ժողովրդին:

Գիտական ու մանկավարժական գործունէութեանը զուգընթաց Դուք նաեւ անխոնջ նուիրեալն էք գեղանկարչութեան արուեստի: Ձեր ինքնատիպ, պայծառ ու լուսաւոր պատկերները ուրախ ու ջերմ զգացումներ են պարգեւում դիտողներին՝ նրանց հոգիներում յաւելելով յոյսն ու լաւատեսութիւնը:

Յարգարժան պրն Արմէնեան, այս տարի իր գործունէութեան 15-ամեակն է բոլորում Հայաստանի Ամերիկեան Համալսարանը: Իբրեւ Համալսարանի նախագահ, Դուք աննուազ եռանդով ներդնում էք Ձեր հարուստ փորձառութիւնն ու կարողութիւնները,

որպէսզի համալսարանը շարունակի կրթել ու պատրաստել բարձրակարգ մասնագէտներ, ովքեր իրենց հոգու եւ մտքի արարումներով կարեւոր մասնակցութիւն պիտի բերեն մեր Հայրենիքի շէնացմանն ու բարգաւաճմանը՝ բարձր պահելով հայ գիտութեան վարկն ու համարումը: Ձեր գործունէութիւնը բարի օրինակ է կրթօջախի ուսանողութեան համար՝ անդուլ ու անյոգնաբեկ աշխատանքով ձգտելու յաջողութիւնների եւ ծառայելու մեր Երկրում գիտութեան առաջընթացին:

Բազում անգամներ Մենք առիթ ունեցել ենք նաեւ դրսեւորուած տեսնել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ Ձեր սէրն ու անխախտ հաւատարմութիւնը, որ կրում էք Ձեր հոգում՝ իբրեւ արժանի զաւակ լիբանանահայ համայնքի:

Սիրեցեալ մեր ժողովրդին մատուցած Ձեր ծառայութեանց բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ուրախալի այս առիթով Մեր աղօթքն է, որ Բարին Աստուած պարգեւի Ձեզ քաջառողջութիւն, նոր եռանդով ու ներշնչումներով լեցուն կեանքի երկար օրեր եւ Իր ամենազօր օրհնութեամբ առաջնորդի Ձեր գիտական, մանկավարժական ու հասարակական գործունէութիւնը՝ ի շինութիւն եւ ի զօրացումն մեր երկրի եւ ի բարօրութիւն հաւատաւոր ժողովրդի:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 15-ն Յունուարի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 399